

## ԱՆԵԿԴՈՏԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑ

ԱՆԵԿԴՈՏՈՐ ԲԱՆԱԿԻՍՏՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԵՐԻԿԵ մեկն է, որն առաջին հերթին աչքի է ընկնում իր բանավոր խոսակցական բնույթով [8: 9]: Լինելով բանահյուսության ժանր՝ այն բնութագրվում է հստակ արտահայտված տեքստային հատկանիշներով: Այն մասին, որ անեկդոտները հանդիսանում են գեղարվեստորեն կազմակերպված գրական տեքստեր, որոնց հատուկ է բավականին բարդ կառուցվածքը, վկայում են դրանցում տեղ գտած բազմաթիվ լեզվաարտահայտչական միջոցները: Ինչպես գիտենք, գեղարվեստական ստեղծագործությունը կողավորելիս հեղինակի կողմից կիրառվող լեզվաարտահայտչամիջոցների նպատակը տեքստի հնարավորինս ճիշտ ընկալումն է: Այսինքն՝ մի կողմից հեղինակը կողավորում է իր ասելիքը, իր մտքերը, իսկ մյուս կողմից ընկալողին տալիս է բանալի՝ ապակողավորման համար, քանի որ յուրաքանչյուր հեղինակի նպատակը հաղորդվածի ճիշտ ընկալումն է: Այսինքն՝ տեքստում կարևորվում է ոչ միայն լեզվական միավորների համակարգի արտահայտումը, այլև դրանց ընկալումը, այն է՝ լեզուն կիրառման մեջ, որի արդյունքում կենտրոնական են համարվում տեքստի տեղեկատվության կառուցման և ուղարկման խնդիրը և դրանց մեկնաբանումը, քանի որ միայն այդ դեպքում է իրացվում լեզվի հաղորդակցական գործառույթը [2, 15]:

Այսպիսով, ցանկացած հաղորդակցում կողավորման-ապակողավորման գործընթացի արդյունք է: Կողավորման գործընթացն իմաստ ունի միայն այն դեպքում, երբ կողավորողից բացի, որն ուղարկում է տեղեկատվությունը, այն ներառում է նաև ընկալողին կամ հասցեատիրոջը, որն այս դեպքում ընթերցողը կամ ունկնդիրն է: Այնուամենայնիվ, հաղորդումը կողավորելը չի նշանակում, որ այն անփոփոխ կփոխանցվի ընկալողին: Ի տարբերություն հեղինակի, որը միշտ կոնկրետ դեմք է, ընթերցողը չունի որոշակի դեմք: Նա կարող է պատրաստ չլինել ապակողավորելու կամ ստանալու տվյալ հաղորդումը: Ընդհանրապես, լսման մի տեքստ իր հասցեատիրոջն հասնելու ճանապարհին հաղթահարում է տարբեր արգելքներ՝ հասարակական, ժամանակային, պատմական, մշակութային և այլն: Ընթերցողներն ու հեղինակները կարող են բաժանված լինել պատմական դարաշրջաններով, հասարակական պայմանականություններով, կրոնական և քաղաքական տեսակետներով, մշակութային և ազգային ավանդույթներով: Ընթերցողները տարբերվում են ոչ միայն հեղինակից, այլև միմյանցից՝ իրենց կենսափոփոխ, կրթական, մշակութային մակարդակով, ճաշակով: Այս ամենը խոչընդոտում են հաղորդման

ապակողավորմանը: Կողավորված և ուղարկված հաղորդումը կարող է տարբերվել ապակողավորումից հետո ստացված հաղորդումից [4, 160-164]:

Նշված դրտարկումները անսխալ գործում են նաև անեկդոտի ժանրում, սակայն որոշակի տարբերությամբ: Այդ համգամանքը պայմանավորված է անեկդոտի՝ բանահյուսության ժանր լինելու փաստով: Այս ժանրում հեղինակը և ընկալողը շատ ավելի «լավ են իրար հասկանում»: Բանավոր տեքստ լինելու շնորհիվ՝ անեկդոտի ընկալումը շատ ավելի արագ և ճիշտ է կատարվում: Պակաս կարևոր գործոն չէ նաև անեկդոտի համընդհանուր ռեթորիկը, դրանում քննարկվող հարցերի համամարդկային բնույթը:

Վերջին ժամանակներս ընկալման խնդիրը շատ լեզվաբանների համար դարձել է քննարկման հիմնական առարկա: Համաձայն Ս. Ջոլյանի, սակայն, այս խնդրի զուտ լեզվաբանական լուծումն ինքնուրույն արժեք և կարևորություն ձեռք կբերի միայն այն դեպքում, երբ չի հանգեցվի փիլիսոփայական կամ հոգեբանական մոտեցումներին և իրենից կենդակայացնի լեզվի իմաստաբանական միջոցների ու մեխանիզմների կոնկրետ լեզվաբանական նկարագրում: Լեզվաբանը հաղորդակցման գործընթացը ներկայացնելիս առանձնացնում է մի նոր միավոր՝ տեքստը՝ ընթերցողի հետ ունեցած իր հարաբերության մեջ: Համաձայն Ս. Ջոլյանի՝ սա չի նշանակում, որ առաջին պլան են մղվում ընկալման հոգեբանական ուսումնասիրությունները, քանի որ այստեղ հիմնական միավորներն են տեքստը և ներտեքստային հարաբերությունները: Փոխվում է հետազոտման դիտանկյունը. ուսումնասիրվում է ոչ միայն տեքստը «ինքն իր մեջ և իր համար», այլև նախ և առաջ տեքստի ընկալման հնարավորությունը, որը ստեղծվում է հենց տեքստի կողմից: Եզրափակելով իր միտքը՝ լեզվաբանը նշում է. «Ընկալել տեքստը, նշանակում է այն որոշակիորեն հարաբերել արտատեքստային իրականության հետ» [5, 10]:

Հետևաբար, հիմնվելով վերոհիշյալ դիտողությունների վրա, կարելի է հավաստել, որ ճիշտ ընկալման կարևոր պայմաններից է տվյալ ազգի մշակույթի, գաղափարախոսության, մտածելակերպի իմացությունը: Այսինքն, լեզվական գիտելիքից բացի, հատկապես անեկդոտի ժանրում կարևորվում է նաև արտալեզվական գիտելիքը: Ա. Ջիվանյանը ևս ընդգծում է, որ տեքստի լեզվական միավորների մեկնաբանումը հիմնվում է ընթերցողի հիմնական գիտելիքների պաշարի վրա, որի համար առավել կարևոր են ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական գործոնները: Լեզվական գործոններից Ա. Ջիվանյանն առանձնացնում է խոսքային համատեքստի իմացությունը [3, 14], որը հատկապես կարևորվում է անեկդոտի ժանրում՝ կապված վերջինիս համատեքստային, իրավիճակային բնույթի հետ:

Հայ իրականության մեջ Ղ. Համբարձումյանը նույնպես շեշտում է լեզվական և արտալեզվական ոլորտների միավորված գոյությունը: Ուսումնասիրելով գեղարվեստական թարգմանության բարդությունները՝ Ղ. Համբարձումյանը նշում է, որ անհնար է առանց արտալեզվական աշխարհի գոյությունը հաշվի առնելու, լեզվական աշխարհի վրա դրա ունեցած ազդեցությունը քննելու հասնել այդ արտալեզվական աշխարհի ինքնատիպ պատկերի՝ լեզվական համակարգով արտահայտված նյութի ճիշտ ընկալմանը [1, 20]:

Նշված դիտարկումները թույլ են տալիս եզրակացնել, որ անեկդոտն իրենից ներկայացնում է ոչ միայն տեքստ, այլ նաև խոսույթ, իսկ վերջինս, ինչպես նշում է Ն. Հարությունովան, խոսքն է՝ կյանք մտած և հաղորդակցման մասնակիցների միջև տեղեկության հոսքի շարժը: Խոսույթը տեքստից տարբերվում է հիմնականում նրանով, որ այն լեզուն ներկայացնում է որպես գործընթաց, որը հաշվի է առնում հաղորդակցման ակտում արտալեզվական գործոնների փոխազդեցությունը. հանգամանք, որն ինչպես նշվել է վերը՝ անեկդոտի ընկալման կարևոր պայմանն է: Այսինքն՝ հնարավոր չէ հասկանալ անեկդոտը՝ առանց տվյալ ժողովրդի գաղափարախոսության, մտածելակերպի և մշակութային արժեքների իմացության, որն էլ իրենից ներկայացնում է պահանջվող արտալեզվական գիտելիքը:

Դիտարկենք մի օրինակ՝

One day George W. Bush, Al Gore and Bill Clinton were in a boat. All of a sudden, the boat sprung a leak and they had only one life jacket. They decided to take a vote to see who would get the life jacket. When the votes were counted, Al Gore had one, Bill Clinton had one, and George W. Bush had seven.

Սույն անեկդոտի ընկալմանը և ցանկալի արդյունքին հասնելուն նպաստում են ոչ միայն տեքստում ամփոփված տեղեկությունը և դրա մատուցման ձևը/որը, ի դեպ, չափազանց կարևոր գործոն է անեկդոտի ժանրի իրացման համար/, այլ նաև լսողի ունեցած անհրաժեշտ գիտելիքների ընդհանուր պաշարը, որը տվյալ դեպքում իր մեջ ներառում է ԱՄՆ-ի նախագահ Ջ. Բուշի՝ ժողովրդի մոտ ունեցած համընդհանուր կարծիքը և համոզմունքը նրա՝ ստեղծելու նկատմամբ ունեցած հակվածության և «սովորության» մասին: Այս անեկդոտը պարունակում է որոշակի քաղաքական դեպքի ուղղված հղում, կոնկրետ՝ 2000թ.-ի Ջ. Բուշի ընտրություններին: Հարկավոր է իմանալ, թե ինչ է պատահել այդ ընտրությունների ժամանակ, հասկանալու համար այս անեկդոտի իմաստը, որն էլ արտացոլված է լսողի ունեցած արտալեզվական գիտելիքի մեջ:

Հարկ ենք համարում նշել նաև, որ ցանկացած խոսույթի ընկալման կարևոր նախապայման է հանդիսանում համատեքստը: Այսպես, լեզվաբան-

ներից Թ.Ա. վան Դեյքը համոզված է, որ խոսույթը կամ կապակցված տեքստը /Թ.Ա. վան Դեյքը «խոսույթ» գիտաբանի փոխարեն նախընտրում է «կապակցված տեքստ» արտահայտությունը/ վակուումում գոյություն չունի, այն ստեղծվում և ընկալվում է խոսողի և լսողի կողմից կոնկրետ իրավիճակում, լայն հասարակամշակութային համատեքստի շրջանակներում [7], քանի որ ցանկացած իրավիճակում չի կարելի խոսել ինչից ցանկանաս. ինչ-որ տեղ համատեքստն ինքն է որոշում հաղորդվող նյութի բնույթը և բովանդակությունը: Նշվածը չափազանց կարևոր հատկանիշ է անեկդոտի ժանրի տեքստերի իրացման համար: Գաղտնիք չէ, որ անեկդոտը պետք է պատմել ճիշտ տեղում և ճիշտ պահին: Տեղին է հիշատակել Ա. Մորուայի խոսքերը. «Անեկդոտը, որ պատմվում է առանց որևէ առիթի, վիրավորական է» [6, 599]: Եվ, իրոք, համատեքստային բնույթը այս ժանրի հիմնական բնութագրիչներից է: Սա ևս վկայում է այն մասին, որ անեկդոտն իսկապես ունի խոսույթի կարգավիճակ և գործում է որպես այդիսին:

Այսպիսով, անեկդոտն իրենից ներկայացնում է հաղորդակցման ինքնուրույն և լիարժեք միավոր, որի իրացման հաջողությունը կախված է հաղորդումն ուղարկողի և լսողի անմիջական կապից, հաղորդողի/պատմողի/ նյութը մատուցելու հատուկ ծիրքից և լսողի՝ թե լեզվական, թե արտալեզվական որոշակի գիտելիքի իմացությունից: Ավելացնենք, որ, ինչպես այլ խոսույթային միավորների, անեկդոտի դեպքում ևս մեծապես կարևորվում է համատեքստը՝ տեքստի իրացման համապատասխան միջավայրը: Վերջինս, կարելի է ասել, նույնպես իր բնույթով հանդիսանում է արտալեզվական գործոն, որի՝ պատմողի կողմից ճիշտ օգտագործումը հանդիսանում է անեկդոտի հաջողության գրավականը:

1. Համբարձումյան Ղ.Բ. Գեղարվեստական ստեղծագործությունը և նրա բարգձմանությունը որպես բանասիրական համալիր բնութայան առարկա: /Սեղմագիր բան. գիտ. դոկտոր/ Եր., 2007. - 38 էջ:

2. Арнольд И.В. Стилистика декодирования Л., 1974. - 76с.

3. /Дживанян А.А. Лингвистические и логико-когнитивные параметры алогических образований в художественном тексте /на материале английского языка/. /Автореферат дисс. канд. фил. наук/ М., 1991. - 20 с.

4. Знаменская Т. А. Стилистика английского языка. Изд. 2. М., 2004. - 200 с.

5. Золян С. Т. Семантика и структура поэтического текста. Е., 1991. - 316 с.

6. Моруа А. Семейный круг. М., 1989. - 623 с.

7. Новое в зарубежной лингвистике. /ред. В. В. Петрова, В. И. Герасимова/ /Вып. Дефик Т. А. и Книш В. Стратегии понимания связного текста./ Вып 23. М. "Прогресс". 1988. - 313 с.

8. Anecdote [ONLINE]. Retrieved September 2005. Web site: <http://thefreedictionary.com/anecdote>

9. Anecdote [ONLINE]. Retrieved 2007. Web site: <http://www.anecdote.ru/>